Վիտամիններն ավելի լավ պահպանելու համար բանջարեղենը ցանկալի չէ երկար ժամանակ թողնել ջրում, իսկ խաշելիս խորհուրդ է տրվում բանջարեղենն ընկղմել եռացող ջրի մեջ և խաշել փակ կաթսայում, թույլ կրակով (1 կգ բանջարեղենին 0.6-0.7 լ ջուր ):

Կարտոֆիլը եփում են աղաջրում, իսկ գազարը, բազուկը, կճպածոլոռն առանց աղի, համեղության որակը պահպանելու համար:

Մաքրած բանջարեղենը եփելիս արգանակի մեջ են անցնում տարբեր սննդարար նյութեր, այդ պատճառով խորհուրդ է տրվում եփաջրերն օգտագործել ապուրներ և սոուսներ պատրաստելու համար (բացառությամբ վաղահաս կարտոֆիլի եփաջուրը):

Բովելու կամ շոգեխաշելու համար բանջարեղենը կտրատում են ձողիկներով, շերտերով և խորանարդիկներով: Այն բանջարեղենը, որը հեշտությամբ արտագատում է իր միջի հյութը (ցուկկինին, դդմիկը, լոլիկը), բովում են փակ ամանում՝ առանց ջուր ավելացնելու: Իսկ նշված հատկությունը չունեցող բանջարեղենը (բազուկը, կաղամբը, գազարը) բովում են՝ ավելացնելով հեղուկ և կարագ (1 կգ բանջարեղենին վերցնում են 0.2-0.3 լ ջուր կամ արգանակ և 20-30գ կարագ):

# Տոլմա բանջարեղենային

## Պատրաստման տեխնոլոգիա.

Լոբին, ոսպը և բրինձն առանձին եփում են և հովացնում:

Հում կարտոֆիլը քերում են քերիչով: Սոխը կտրատում են խորանարդիկներով և շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում՝ ավելացնելով բուսական յուղ, մինչ պատրաստ լինելը:

Հում կարտոֆիլը, շոգեխաշած գլուխ սոխը խառնել խաշած բրնձի, ոսպի և լոբու հետ, աղ անել և մանրակրկիտ խառնել:

Կաղամբի տերևները (58 գ) 5 րոպեով ընկղմում են տաք աղաջրի մեջ, հետո քամում և կտրում կաղամբի կոշտ մասերը:

Կաղամբի տերևով փաթաթել խճողակը, դնել կաթսայի մեջ: Լցնել բուսական յուղ, ջուր այնքան, որ պատրաստի տոլմաները լիովին ծածկվեն, ավելացնել տոմատի մածուկ և շոգեխաշել 30-40 րոպե:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. գլանաձև տոլմա, դրված ափսեի վրա, պատված սոուսով:

Համը. խաշած կաղամբի, բրնձի և բանջարեղենի, տոմատի համով:

Կազմությունը. կաղամբի տերևները՝ փափուկ, աղացած միսը՝ հյութալի:

Հոտը. շոգեխաշած բանջարեղենի, բրնձի, տոմատի բույրով:

Գույնը. բաց կանաչ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	արդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
5,6	0	6,8	23,4	177	0,1	0,09	0	12,7	61,5	228,9	48,7	3,7



65 °C-ից ոչ ցածր:



պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Կաղամբի տերևներ	72,5	58
Բրինձ	23	23
Լոբի	12	12
Ոսպ	18	18
Կարտոֆիլ	17	11
Գլուխ սոխ	16	12
Բուսական յուղ	10	10
Աղ	0,6	0,6
Տոմատի մածուկ	5	5
Կիսապատրաստուկի զանգվածը.	-	178
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150



# Խաչափ կարտոֆիլ սոխով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Կարտոֆիլը դնում են եռացող ջրի մեջ, ավելացնում աղը: Ջրի մակարդակը պետք է բարձր լինի կարտոֆիլի մակարդակից 1-1.5 սմ-ով: Կարտոֆիլը եփում են 25-30 րոպե՝ մինչ պատրաստ լինելը, այնուհետև ջուրը թափում են: Պատրաստ կարտոֆիլը կտրատում են խոշոր խորանարդիկներով:

Սոխը կտրատում են մանր շերտերով և շոգեխաշում մինչ պատրաստ լինելը քիչ քանկությամբ ջրում, ավելացնելով բուսական յուղ:

Կերակրատեսակը մատուցելիս կարտոֆիլի վրա դնում են շոգեխաշած սոխը:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. մաքրած կարտոֆիլ ամբողջական պալարներով, չզերխաշված, սոխը կտրատած շերտերով:

Գույնը. կարտոֆիլի՝ սպիտակ, կրեմագույն երանգով, սոխի՝ ոսկեգույն:

Կազմությունը. կարտոֆիլը՝ փխրուն կամ չափավոր խիտ, սոխը՝ փափուկ:

Համը. թարմ խաշած կարտոֆիլի և սոխով, չափավոր աղի:

Հոտը. թարմ խաշած կարտոֆիլի և սոխի:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	արդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
3	0	6,7	20	152	0,13	0,08	0	20,6	26,2	87,7	29,8	1,2

 65 °C-ից ոչ ցածր:  պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Կարտոֆիլ	207	154,5
Գլուխ սոխ	48	40
Բուսական յուղ	6	6
Աղ	1,5	1,5
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150/20

39

# Պշարե կարտոֆիլ

## Պատրաստման տեխնոլոգիա.

Կարտոֆիլը դնում են եռացող ջրի մեջ, ավելացնում աղը: Ջրի մակարդակը պետք է բարձր լինի կարտոֆիլի մակարդակից 1-1.5 սմ-ով : Կարտոֆիլը եփում են 25-30 րոպե, մինչ պատրաստ լինելը, այնուհետև ջուրը թափում են:

Տաք կարտոֆիլը քերում են, ավելացնում եռացրած կաթ: Կարագը հալեցնում են, հասցնում եռման, լցնում կարտոֆիլի խյուսի վրա և մանրակրկիտ խառնում:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. կարտոֆիլի զանգված:

Համը. խաշած կարտոֆիլին բնորոշ, կարագի և տաք կաթի արտահայտված համով, չափավոր աղի, նուրբ:

Կազմությունը. խիտ, փքուն, համասեռ:

Հոտը. թարմ պատրաստված կարտոֆիլի խյուսի, տաք կաթի և կարագի բույրով:

Գույնը. սպիտակ, կրեմագույն երանգով:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
3,2	0,8	4,8	20,4	138	0,1	0,11	2,7	18,2	37	86,6	27,8	1



65 °C-ից ոչ ցածր:



պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
	Կարտոֆիլ	177,9
Կաթ	27	27
Կարագ	3	3
Աղ	0,6	0,6
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150

# Կաղամբ շոգեխաշած

## Պատրաստման տեխնոլոգիա.

Շերտերով կտրատած կաղամբը դնում են կաթսայի մեջ, ավելացնում ջուրը, բուսական յուղը և շոգեխաշում մինչ կիսապատրաստ լինելը: Տոմատի մածուկը բովում են 5-7 բուլբուլի ընթացքում քիչ քանակությամբ ջրում, ավելացնում են կաղամբը և շոգեխաշում՝ պարբերաբար խառնելով:

Գազարն ու սոխը կտրատում են շերտերով, շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում, ավելացնելով բուսական յուղ: Պատրաստի բանջարեղենն ավելացնում են կաղամբին և շոգեխաշում մինչ պատրաստ լինելը: Պատրաստ լինելուց 5 բուլբուլ առաջ ավելացնում են աղ, շաքարավազ:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. շոգեխաշած կաղամբի և բանջարեղենի խառնուրդ: Շերտերով կտրատած կաղամբ, սոխ և գազար:

Համը. կաղամբին և կերակրատեսակի բաղադրատոմսում ներառված մթերքներին բնորոշ, չափավոր աղի, թթվաքաղցր:


Կազմությունը. հյութալի, թեթևակի խրթխրթան:

Հոտը. շոգեխաշած կաղամբի՝ տոմատի, բանջարեղենի բույրով:

Գույնը. թեթև շագանակագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
3,1	0	4,8	14,2	112	0,33	0,5	0	25,6	83,1	60,1	30,9	1,2

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

համաքաշը, գ      գտաքաշը, գ

Կաղամբ սպիտակ թարմ	187,5	150
Բուսական յուղ	6	6
Տոմատի մածուկ	3	3
Գազար	18,7	15
Գլուխ սոխ	14,2	12
Աղ	0,45	0,45
Շաքարավազ	1,5	1,5
Ջուր	45	45
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150

# Դազրու բանջարեղենով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Կարտոֆիլը կտրատում են խորանարդիկներով և շոգեխաշում 10-15 րոպե:

Գազարը կտրատում են խորանարդիկներով, սոխը՝ շերտերով: Նախապատրաստած բանջարեղենը շոգեխաշում են քիչ քանակությամբ ջրում՝ ավելացնելով բուսական յուղ: Կարտոֆիլը և շոգեխաշած բանջարեղենը միացնում են, ավելացնում կարմիր սոուսը և 10-15 րոպե շոգեխաշում: Պատրաստ լինելուց 5 րոպե առաջ ավելացնում են աղի հետ տրորած սխտորը և շոգեխաշում մինչ պատրաստ լինելը:

Կարմիր սոուս պատրաստելու համար.  
Գազարը կտրատում են մանր շերտերով և 10-15 րոպե

շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում՝ ավելացնելով բուսական յուղ, այնուհետև ավելացնում են տոմատի մածուկը և մարմանդ կրակի վրա հասցնում պատրաստի վիճակի: Այուրը բովում են մինչ բաց դեղին գույն ստանալը, հովացնում են և բացում գոլ ջրով, մանրակրկիտ խառնում: Ստացված զանգվածը միացնում են տոմատի մածուկով շոգեխաշած բանջարեղենին:

Մարմանդ կրակի վրա հասցնում են պատրաստի վիճակի: Վերջում ավելացնում են աղը, շաքարավազը: Մոուսն անցկացնում են քամիչով, մեջը քերում խաշված բանջարեղենը և եռացնում:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. բանջարեղենը և կարտոֆիլը կտրատած են խորանարդիկներով կամ շերտերով, բանջարեղենը պահպանել է իր սկզբնական կտրատման ձևը:

Կազմությունը. կարտոֆիլինը, բանջարեղենինը՝ փափուկ, խիտ:

- Գույնը. բաց նարնջագույն:
- Համը. չափավոր աղի, թթվաքաղցրավուն:
- Հոտը. բանջարեղենի, չի թույլատրվում այրված բանջարեղենի հոտը:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այր թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
2,2	0	13,7	10,7	175	0,07	0,07	0	15,6	46,4	56,2	20,3	0,75

 65 °C-ից ոչ ցածր:  պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Կարտոֆիլ	96,4	67,5
Գազար	37,5	30
Գլուխ սոխ	17,9	15
Ջուր	45	45
Բուսական յուղ	4	4
Դադած բանջարեղենի զանգվածը.	-	112,5
Տոմատի մածուկ	3,6	3,6
Գազար	4,5	3,6
Ցորենի ալյուր	1,5	1,5
Շաքարավազ	1,2	1,2
Բուսական յուղ	6	6
Ջուր	34,5	34,5
Հիմնական կարմիր սոուսի պատրաստի զանգվածը	-	45
Սխտոր	0,6	0,45
Աղ	0,45	0,45
<b>Պատրաստի կերակրաբաժինը, գ</b>	<b>150</b>	

# Կարտոֆիլ կարտոֆիլի

## Պատրաստման տեխնոլոգիա.

Մաքրած կարտոֆիլը եփում են աղաջրում, ջուրը թափում են, կարտոֆիլը տրորում և հովացնում մինչև 40–50°C, ավելացնում են ձուն : Ջանգվածը խառնում են և կոտլետներ ձևավորում. յուրաքանչյուր կերակրաբաժնի համար 2 հատ:

Կոտլետները թավալում են այլուրի մեջ, թեթև տապակում երկու կողմից թավայի մեջ: Մատուցելիս վրան լցնում են հալեցրած և եռման աստիճանի հասցրած կարագ:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. օվալաձև, երկկողմանի տափակացրած: Մակերեսն առանց ճաքերի, համաչափ տապակված:


Գույնը. կեղևի՝ ոսկեգույն, կտրվածքի տեղում՝ դեղին:


Համը. չափավոր աղի, կարտոֆիլին բնորոշ:

Կազմությունը. փափուկ, կեղևը՝ խիտ:

Հոտը. տապակած կարտոֆիլի:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
3,1	0,4	8	16,9	152	0,11	0,08	37	3,3	15,2	74,9	24	0,8

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար  
համաքաշը, գ      գտաքաշը, գ

Կարտոֆիլ	147	110
Ձու	1/14 հատ	3
Աղ	0,3	0,3
Ցորենի այլուր	6	6
Կիսապատրաստուկի զանգվածը	-	113
Բուսական յուղ	5	5
Տապակած կոտլետների զանգվածը	-	100
Կարագ	5	5
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100/5



# ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐ ՁԱՎԱՐԵՂԵՆԻՑ ԵՎ ԸՆԴԵՂԵՆՆԵՐԻՑ

Տարբեր տեսակի ձավարեղենից պատրաստված կերակրատեսակներն անվանում են շիլաներ: Շիլաները եփում են ջրով, կաթով, կաթի և ջրի խառնուրդով:

Էմալապատ կաթասները պիտանի չեն ձավարեղեն եփելու համար. շիլաները դրանցում այրվում են: Ավելի լավ է օգտագործել մետաղյա կաթասներ հաստ ուռուցիկ հատակով: Այդպիսի կաթասում ձավարեղենի հատիկներն առավել համաչափ են տաքանում:

Կախված ձավարեղենի և հեղուկի հարաբերակցությունից շիլաները կարող են լինել փխրուն, մածուցիկ կամ ջրիկ:

Փխրուն շիլայում հատիկները պետք է լինեն լավ եփված, պահպանեն իրենց ձևը և հեշտությամբ առանձնանան միմյանցից:

Մածուցիկ շիլան պետք է լինի բավականին խիտ՝ ամբողջովին եփված հատիկներով: Տաք մածուցիկ շիլան ափսեի վրա մնում է բլրած, առանց հոսելու: Կաթնային մածուցիկ շիլան ուտում են տաք վիճակում:

Ջրիկ շիլաները երեխաների համար եփում են կորեկից, բրնձից, սպիտակաձավարից, ցորենի և վարսակի ձավարներից և վարսակի փաթիլներից ջրով՝ ավելացնելով կաթ: Մատուցում են տաք վիճակում կարագով, մուրաբայով կամ մեղրով: Այդ շիլաները եփվում են այնպես, ինչպես և մածուցիկները, սակայն

ջրի մեծ քանակությամբ: Ջերմային մշակումից առաջ ձավարեղենը ընտրում են, մաղում և լվանում: Մպիտակաձավարը և մանրացված ձավարեղենը, վարսակի փաթիլները չեն լվանում:

Թույլատրվում է շիլաները պատրաստել ձավարեղենի մի քանի տեսակից: Ձավարեղենը լցնելու հերթականությունը կախված է դրանց եփելու տևողությունից:

Ձավարեղենի տարբեր տեսակներ ոչ միանման արագ են ուռչում և եփվում ջրում ու կաթի մեջ: Օրինակ՝ բրինձը և ցորենը եփվում են կաթում ավելի վատ և դանդաղ, քան ջրում: Այդ պատճառով կաթնային շիլաներ եփելիս ձավարեղենը պետք է սկզբից 20-30 րոպեի ընթացքում եփել եռացող ջրում, այնուհետև ավելացնել տաք կաթը և շարունակել եփել շիլան մինչ պատրաստ լինելը:

Ընդդեմներից պատրաստված կերակրատեսակները համարվում են բուսական սպիտակուցի արժեքավոր աղբյուրներ: Խավարտների համար ընդդեմներն օգտագործում են եփված վիճակում, սակայն, քանի որ դրանք դանդաղ են եփվում, դրանց նախապես թրջում են սառը ջրի մեջ: Բացի դա, նախապես թրջելն անհրաժեշտ է, որպեսզի եփելիս ընդդեմը չձևափոխվի և մնա ամբողջական:

## Ինչքան ժամանակ է եփվում շիլան

- Հնդկալուզամարի, փխրուն՝ 45 րոպե*
- Կորեկի, փխրուն՝ 45 րոպե*
- Կորեկի, մածուցիկ և հեղուկ՝ 35 րոպե*
- Վարսակի, մածուցիկ և հեղուկ՝ 25 րոպե*
- Բրնձի, փխրուն՝ 45 րոպե*
- Բրնձի, մածուցիկ՝ 40 րոպե*
- Բրնձի, զրիկ՝ 30 րոպե*
- Ապխրակալուզամարի, մածուցիկ և զրիկ՝ 15-20 րոպե*

# Խաչապուրի փխրուն բրինձ կարագով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Բրինձը լցնում են եռացող աղաջրի մեջ և եփում թույլ կրակի վրա: Երբ հատիկները կուռչեն և կփափկեն, բրինձը փլավքամիչով քամում են:

Կարագը հալեցվում է և հասցվում եռման աստիճանի: Ջուրը քամելուց հետո բրինձը դնում են կաթսայի մեջ, վրան լցնում հալեցրած կարագը և խառնում:

## Որակյին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ձևը և առաձգականությունը պահպանած բրնձահատիկներ լիովին ուռչած, փափուկ: Բրնձահատիկներն առանձնանում են: Փլավի վրա կարագ է լցված:


Գույնը. սպիտակ:


Համը. բրնձին բնորոշ, առանց նեխահամի և կծվահամի:

Կազմությունը. համասեռ, հատիկները խիտ, փխրուն:

Հոտը. բրնձին բնորոշ, կարագի բույրով:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
3,6	0,02	4,3	36,6	200	0,03	0,02	26,6	0	5,3	77,9	25,4	0,6

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Բրինձ	54	54
Կարագ	4,5	4,5
Ջուր	324	324
Աղ	0,45	0,45
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150

# Շիբա հնդկազավարի փխրուն

## Պատրաստման տեխնոլոգիա.

Եփման համար նախապատրաստված ձավարեղենը լցնում են եռացող աղաջրի մեջ, որտեղ ջրի երես բարձրացած սնամեջ հատիկները հեռացնում են: Երբ շիլան կթանձրանա, տարան վերցնում են գազօջախի վրայից և փակում կափարիչով: Այդ ընթացքում այն

ձեռք է բերում յուրահատուկ հոտ և գույն:

Կարագը հալեցնում են, հասցնում եռման աստիճանի և լցնում շիլայի վրա:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը: հնդկազավարի հատիկները լիովին ուռչած, փափուկ, պահպանում են տեսքը և առաձգականությունը: Հատիկներն առանձնանում են միմյանցից: Շիլայի վրա կարագ է լցրած:


Գույնը. ձավարեղենի տվյալ տեսակին բնորոշ:


Համը. հնդկազավարին բնորոշ, առանց նեխաահամի և կծվահամի:

Կազմությունը. համասեռ, հատիկները խիտ, փխրուն:

Հոտը. հնդկազավարին բնորոշ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
8,3	0,02	8,1	37,3	255	0,26	0,15	26,6	0	24,7	197,1	131,7	5,91

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Հնդկազավար	51	49,9
Ջուր	101,2	101,2
Աղ	0,5	0,5
Կարագ	4,5	4,5
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150

45

# Փյուն Ֆրգերով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Գազարը կտրատում են շերտերով, շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում, ավելացնելով կարագ:

Քիչ քանակությամբ ջրում եփում են բրինձը, ավելացնում են գազարը, աղը և եփում են բերանը բաց կաթսայում, մինչ հեղուկի լրիվ գոլորշիանալը: Բրնձի

պատրաստ լինելուց 10-15 րոպե առաջ ավելացնում են նախապատրաստած չամիչը և ծիրանաչիրը: Ամբողջը մանրակրկիտ խառնում են, փակում կափարիչով և թույլ կրակի վրա հասցնում պատրաստի վիճակի:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. հատիկները լիովին ուռչած, փափուկ, ձևը և առաձգականությունը պահպանած, միմյանցից լավ առանձնանում են:


Համը. բրնձի՝ գազարի, ծիրանաչրի, չամիչի հաճելի համով:


Կազմությունը. համասեռ, փխրուն:

Հոտը. բրնձի, գազարի, ծիրանաչրի, չամիչի:

Գույնը. դեղին՝ գազարի, ծիրանաչրի շնորհիվ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
5,5	0,03	13,6	57,6	375	0,08	0,1	29,5	1,1	72,5	146	66,9	1,8

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար  
 համաքաշը, գ      զտաքաշը, գ

Բրինձ	52	52
Ջուր	110	110
Կարագ	5	5
Ծիրանաչիր	20	20
Գազար	52	40
Չամիչ	10,2	10
Պատրաստի կերակրաբաժինը, գ		200

46

# Խաչաֆ ոսպ կարագով

Պատրաստման տեխնոլոգիա.

Ոսպը եփում են առանց աղի մինչ փափկելը: աստիճանի հասցրած կարագով, ավելացնում են աղը: Պատրաստի ոսպը համեմում են հալեցրած և եռման


Որակին ներկայացվող պահանջները.


Արտաքին տեսքը. կարագով համեմված ոսպ: Համը. կարագի համով ոսպ, չափավոր աղի:

Կազմությունը. փափուկ: Հոտը. եփած ոսպի:

Գույնը. շագանակագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
15,2	0,04	6,2	31,2	241	0,28	0,21	41,3	0	71,7	240,1	44,4	7,7

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար  
 համաքաշը, գ      զտաքաշը, գ

Ոսպ	72,8	72
Ջուր	150	150
Կարագ	7	7
Աղ	0,3	0,3
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150

47

# Կարբեթներ ուսպով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Ոսպը եփում են առանց աղի մինչև փափկելը:

սոխը, աղը և խառնում են մինչ համասեռ կազմությունը:

Սոխը կտրատում են մանր խորանարդիկներով և ավելացնելով բուսական յուղ, բովում մինչ պատրաստ լինելը:

Կտուլետները ձևավորում են՝ 2 հատ յուրաքանչյուր կերակրաբաժնին, թավալում են այլուրի մեջ: Կտուլետները թեթևակի տապակում են երկու կողմից թավայի մեջ, մինչ կեղևի առաջանալը:

Պատրաստի ոսպը հունցում են, ավելացնում են բոված

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ձվաձև կտուլետներ, բոված


Համը. սոխով եփած ոսպի, չափավոր աղի:


Կազմությունը. փափուկ, հյութալի:

Հոտը. եփած ոսպի:

Գույնը. շագանակագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
11,3	0	17,2	23,1	292	0,11	0,07	0	3,3	32	68	24	0,8

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Ոսպ	43	43
Եփած ոսպի զանգվածը	-	86
Գլուխ սոխ	23	19
Բուսական յուղ	5	5
Աղ	0,3	0,3
Այլուր	5	5
Կ/Ֆ զանգվածը	-	116
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

# Ընդերեսներ սոխով եփած

Պատրաստման տեխնոլոգիա.

Ոսպը կամ լոբին եփում են առանց աղի մինչ պատրաստ լինելը:

Այնուհետև շոգեխաշած սոխը միացնում են ոսպի կամ լոբու հետ, ավելացնում աղը և մանրակրկիտ խառնում:

Գլուխ սոխը կտրատում են խորանարդիկներով և շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում՝ ավելացնելով բուսական յուղ:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. տեսքը պահպանված լոբի կամ ոսպ:


Համը. համապատասխանում է ընդդեմի և շոգեխաշած սոխի համին, չափավոր աղի:


Կազմությունը. փափուկ:

Հոտը. համապատասխանում է ընդդեմի և շոգեխաշած սոխի հոտին:

Սոխով եփած ոսպի 1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
14,6	0	9	28,9	255	0,2	0,1	0	2,3	75	263,1	55,5	7,4

Սոխով եփած լոբու 1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
12,8	0	9,3	29,3	252	0,18	0,1	0	2,25	116	317,5	69,3	3,9

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

	Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար	
	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Ոսպ կամ	72,8	72
Լոբի	72,8	72
Ջուր	150	150
Եփած ոսպի զանգվածը	-	150
Եփած ընդդեմի զանգվածը	-	150
Գլուխ սոխ	44,6	37,5
Բուսական յուղ	5	5
Շոգեխաշած սոխի զանգվածը	-	20
Աղ	0,3	0,3
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150/20

# Ընդերդեմեր սոխով և տոմատի մածուկով եփած

## Պատրաստման տեխնոլոգիա.

Լոբին կամ ոսպը եփում են առանց աղի, մինչ կիսապատրաստ լինելը:

Սոխը կտրատում են մանր խորանարդիկներով, շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում՝ ավելացնելով

բուսական յուղ և տոմատի մածուկ: Այնուհետև միացնում են եփած լոբու կամ ոսպի հետ, ավելացնում աղը և խառնելով տաքացնում մինչև եռման աստիճանը:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ամբողջականությունը պահպանած լոբազգիներ:

Կազմությունը. փափուկ:


Գույնը. համապատասխանում է տոմատի խյուսում լոբազգիների տեսքին:


Համը. համապատասխանում է լոբազգիների, շոգեխաշած սոխի և տոմատի մածուկի համին, չափավոր աղի:

Հոտը. համապատասխանում է լոբազգիների և շոգեխաշած սոխի հոտին:

Սոխով և տոմատի մածուկով եփած ոսպի 1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
13,6	0	6,1	29,3	227	0,17	0,09	30	2,7	105	274,3	69,5	4,82

Սոխով և տոմատի մածուկով եփած լոբու 1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
12,7	0	6,1	28,4	219	0,17	0,09	0	2,7	110	280	71,1	3,96

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

	Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար	
	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Ոսպ	72,8	72
կամ լոբի	72,8	72
Ջուր	150	150
Եփած ոսպի զանգվածը	-	150
Եփած լոբու զանգվածը	-	150
Գլուխ սոխ	46	40
Բուսական յուղ	5	5
Աղ	0,3	0,3
Տոմատի մածուկ	12	12
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150



## ՄԱԿԱՐՈՆԵՂԵՆՈՎ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐ

Մակարոնեղենը (մակարոնները, արիշտան, վերմիշելը) եփում են մեծ քանակությամբ եռացող աղաջրում՝ 1 կգ մակարոնեղենին վերցնում են 6 լիտր ջուր և 50 գրամ աղ:

Մակարոնը, վերմիշելը և արիշտան եփելը դյուրին է: Միայն անհրաժեշտ է հիշել, որ եփելու ընթացքում դրանց ծավալը բավականին մեծանում է. մոտ երեք անգամ:

Եփելու ժամանակը կախված է մակարոնեղենի ձևից, տեսակից և քանակությունից:

Եփելու ժամանակը որոշում են՝ պարբերաբար փորձելով մակարոնեղենը. դրանք պետք է լինեն փափուկ, բայց առաձգական, չփխլված:

*Եփելու ժամանակը.*

*Մակարոն՝ 30-40 րոպե,*

*Արիշտա՝ 25-30 րոպե,*

*Վերմիշել՝ 10-15 րոպե:*

Պատրաստի մակարոնեղենը լցնում են քամիչի կամ մաղի վրա եռացող ջրի հետ միասին: Ջուրը քամվելուց հետո մակարոնեղենը տեղափոխում են ամանի մեջ, վրան կարագ դնում և խառնում: Մակարոնեղենը ջրով չեն ցողում:

50

# Խաչաֆ մակարոնեղեն կարագով

Պատրաստման տեխնոլոգիա.

Եռացող աղաջրի մեջ լցնում են մակարոնեղենը և եփում 30-40 րոպե: Եփած մակարոնը լցնում են քամիչի վրա, ջուրը քամվելուց հետո տեղափոխում տարայի մեջ:

Կարագը հալեցնում են, հասցնում եռման աստիճանի և լցնում մակարոնի վրա:

Որակի ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. տեսքը պահպանած և միմյանցից հեշտությամբ առանձնացող մակարոնեղեն:


Գույնը. սպիտակ՝ կրեմագույն երանգով:


Կազմությունը. փափուկ, առաձգական, չափավոր խիտ:

Համը. եփած մակարոնեղենին բնորոշ, չափավոր աղի:

Հոտը. եփած մակարոնեղենի:

1 կերակրարժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
5,4	0,03	5,8	30,4	195	0,04	0,02	26,6	0	10,6	32,8	7,1	0,71

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրարժնի համար

Մակարոնեղեն	համաքաշը, գ	զտաքաշը, գ
	Ջուր	300
Աղ	1,5	1,5
Կարագ	4,5	4,5
Պատրաստի կերակրարժինը, գ		150

# Խաչափ մակարոններին կարագով և պանիրով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Մակարոնները լցնում են եռացող աղաջրի մեջ և եփում մինչ պատրաստ լինելը, լցնում են քամիչի կամ մաղի մեջ:

Առանձին կաթսայում հալեցնում են կարագը, հասցնում եռման աստիճանի, ավելացնում մակարոնները և խառնում:

Պատրաստի մակարոնները 4-6 սմ հաստությամբ շերտով դնում են թավայի մեջ, վրան լցնում քերած

պանիր և 8-10 բուլե թխում ջեռոցում՝ 150-180°C աստիճանի տակ:

Գազօջախի վրա պատրաստելու տարբերակը. Եփած մակարոնները խառնում են հալեցրած կարագի հետ, վրան լցնում քերած պանիր և թույլ կրակի վրա հասցնում են պատրաստի վիճակի, անընդմեջ խառնելով, մինչ պանրի հալվելը:

## Որակյին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ձևը պահպանած և միմյանցից հեշտությամբ առանձնացվող մակարոններ, պանիրը հալած:

Կազմությունը. փափուկ, առաձգական, չափավոր խիտ:

Գույնը. սպիտակ՝ կրեմագույն երանգով:

Համը. եփած մակարոններին բնորոշ, աղի պանրի:

Հոտը. պանրի բույրով եփած մակարոններին:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
10,6	5,8	11,9	25,5	252	0,06	0,09	91,3	0,17	230,6	157,8	15,8	0,96

65 °C-ից ոչ ցածր: պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



Մթերքի անվանումը	Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար	
	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Մակարոններ	50	50
Ջուր	300	300
Աղ	1,5	1,5
Կարագ	4,5	4,5
Պանիր	27,4	24,9
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150

# Խաչափ մակարոններին բանջարեղենով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Մակարոնեղենը դնում են եռացող աղաջրի մեջ և եփում մինչ պատրաստ լինելը, լցնում են քամիչի մեջ: Համեմունք են քիչ քանակությամբ բուսական յուղով, որպեսզի մակարոնները չկպչեն միմյանց:

բուսական յուղ: Այնուհետև ավելացնում են տոմատի մածուկը և շոգեխաշում 5-10 րոպե: Պատրաստի բանջարեղենն ավելացնում են մակարոնեղենի վրա և խառնում:

Գազարն ու սոխը կտրատում են շերտերով և շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում, ավելացնելով

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ձևը պահպանած և բանջարեղենի հետ համաչափ խառնված մակարոնեղեն, բանջարեղենը կտրատած շերտերով:

Համը. կերակրաբաժնի բաղադրության մեջ մտնող եփած մակարոնեղենին և բանջարեղենին բնորոշ, չափավոր աղի:

Կազմությունը. մակարոնեղենը՝ փափուկ, առաձգական, չափավոր խիտ, բանջարեղենը՝ փափուկ: Գույնը. վարդագույն տոմատի մածուկի շնորհիվ:

Հոտը. եփած մակարոնեղենի, բանջարեղենի և տոմատի:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
5,4	0	6,2	29,7	196	0,07	0,04	0	2,82	20,2	52,9	18,1	1,1

 65 °C-ից ոչ ցածր:  պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



Մթերքի անվանումը	Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար	
	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Մակարոնեղեն	52,2	52,5
Աղ	1,5	1,5
Գազար	15	12
Գլուխ սոխ	11,3	9,5
Բուսական յուղ	6	6
Տոմատի մածուկ	8	8
Պատրաստի կերակրաբաժինը, գ		150



## ԿԱԹՆԱՅԻՆ ՇԻԼԱՆԵՐ

Կաթնային շիլաներն իրենցից ներկայացնում են մածուցիկ շիլաներ, որոնցում ձավարեղենի հատիկները պետք է լիովին ուռչած և լավ եփված լինեն: Եփելուց առաջ ձավարեղենը ընտրում են, մաղում և լվանում:

Եփելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տարբեր տեսակի ձավարեղենը միանման չի ուռչում և եփվում:

Բրինձը, ցորենը, եգիպտացորենը և կորեկը կաթում ավելի դանդաղ են եփվում, քան ջրում: Այդ պատճառով դրանք սկզբից եփում են ջրում, ապա ավելացնում են տաք կաթը և եփում շիլան մինչ պատրաստ լինելը:

Սպիտակաձավարը 90-95°C ջերմաստիճանում համարյա լիովին ուռչում է և գերեփում: Դրա համար, պետք է այն անընդմեջ խառնելով, լցնել տաք կաթի մեջ:

Հնդկաձավարը լցնում են եռացող կաթի մեջ, ավելացնում աղը, շաքարը, և, պարբերաբար խառնելով, եփում, մինչև շիլայի թանձրանալը: Կաթսան ամուր փակում են կափարիչով և թողնում գազօջախին մարմանդ կրակի վրա, մինչ պատրաստ լինելը:

Կաթնային մածուցիկ շիլաները մատուցում են տաք վիճակում՝ համեմված շաքարավազով և վրան լցնում են հալեցրած կարագ:

# Կարծնային շիւա բրնձե

## Պատրաստման տեխնոլոգիա.

Եռացող ջրի մեջ լցնում են նախապատրաստած բրինձը, և պարբերաբար խառնելով, եփում 20 րոպե: Դրանից հետո ավելացնում են տաք կաթը, աղը, շաքարավազը և շարունակում են եփել, մինչ պատրաստ լինելը: Տաք շիւան մատուցում են կարագով:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ձավարեղենի հատիկները ուռչած, գերեփված, շիւային համեմված է կարագ:


Համը. չափավոր քաղցր և աղի, կաթի արտահայտված համով, համեմված կարագի համով:


Կազմությունը. համասեռ, մածուցիկ, հատիկները՝ փափուկ:

Հոտը. կաթի և կարագի համակցությամբ եփած բրնձին համապատասխանող:

Գույնը. բրնձին բնորոշ՝ սպիտակից մինչև բաց կրեմագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
5,7	3	10,6	41,3	284	0,07	0,16	69	0,7	122	155	35	0,6

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Բրինձ	44	44
Կաթ	100	100
Ջուր	65	65
Շաքարավազ	6	6
Աղ	0,3	0,3
Շիւայի զանգվածը.	-	200
Կարագ	10	10
Պատրաստի կերակրաբաժինը, գ		200/10

# Շիւա կաթի և զրի խառնուրդով և ապիտակազամարով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Թավայի մեջ լցնում են կաթն ու ջուրը, հասցնում եռման, ավելացնում աղը, շաքարավազը և խառնում: Այնուհետև բարակ շիթով լցնում են սպիտակաձավարը՝ անընդհատ խառնելով եփում են 20 րոպե:

Մատուցելիս շիլայի մեջ ավելացնում են հալեցված կարագ:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ձավարեղենի հատիկները լիովին եփված:


Համը. չափավոր քաղցր և աղի, կաթի արտահայտված համով, համեմված կարագի համով:


Կազմությունը. հեղուկ, տարածվում է ափսեով:

Հոտը. կաթի և կարագի և հնդկաձավարի շիլայի համակցությամբ:

Գույնը. սպիտակ կամ բաց կրեմագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
5,7	3	10,5	38,5	271	0,07	0,16	69	1,1	121,9	116	19	0,4

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար  
համաքաշը, գ      գտաքաշը, գ

Սպիտակաձավար	31	31
Կաթ	100	100
Ջուր	75	75
Շաքարավազ	6	6
Աղ	0,3	0,3
Շիլայի զանգվածը	-	200
Կարագ	10	10
Պատրաստի կերակրաբաժինը, գ		200/10

# Կարծնաչին շիւրա կորեկեիչ

## Պատրաստման տեխնոլոգիա.

Չավարեղենը լցնում են եռացող հեղուկի (ջրով կաթ) մեջ, ավելացնում աղը, շաքարավազը և պարբերաբար խառնելով եփում մինչև շիլայի թանձրանալը: Կաթսան ամուր փակում են կափարիչով և 5 րոպեով թողնում

գազօջախին՝ մարմանդ կրակի վրա: Մատուցելիս ավելացնում են հալեցրած կարագ:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. ձավարեղենի հատիկներն ուռչած են, լիովին եփված, շիլան համեմված է կարագով:


Համը. չափավոր քաղցր և աղի, կաթի արտահայտված համով, համեմված կարագի համով:


Կազմությունը. համասեռ, մածուցիկ, հատիկները՝ փափուկ:

Հոտը. տվյալ ձավարեղենին և կաթին բնորոշ:

Գույնը. բաց դեղին:

1 կերակրարաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
8,5	3	11,8	41,9	308	0,23	0,16	69	0,7	132	204	54	1,5

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրարաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
	Կորեկ	50
Կաթ	100	100
Ջուր	60	60
Շաքարավազ\	6	6
Աղ	0,3	0,3
Շիլայի զանգվածը	-	200
Կարագ	10	10
Պատրաստի կերակրարաժինը, գ		200/10



57

# Կարճույին շիւր հնդկաչամարիչ

## Պատրաստման տեխնոլոգիա.

Ձավարեղենը լցնում են եռացող հեղուկի (ջրով կաթ) մեջ, ավելացնում աղը, շաքարավազը, և պարբերաբար խառնելով եփում: Երբ շիւրան կթանձրանա, կաթսան ամուր փակում են կափարիչով և 5 րոպեով թողնում գազօջախին մարմանդ կրակի վրա:

Շիւրան մատուցում են հալեցրած կարագով:

## Որակին ներկայացվող պահանջները.

**Արտաքին տեսքը.** ձավարեղենի հատիկներն ուռչած են, լիովին եփված, շիւրան համեմված է կարագով:


**Համը.** չափավոր քաղցր և աղի, կաթի արտահայտված համով, համեմված կարագի համով:


**Կազմությունը.** համասեռ, մածուցիկ, հատիկները՝ փափուկ:

**Հոտը.** կաթի և կարագի համակցությամբ համապատասխան շիլայի:

**Գույնը.** ձավարեղենի տեսակին համապատասխան՝ բաց կրեմագույնից մինչև դեղին:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
12	4,1	8,7	45,3	308	0,24	0,14	73	0	31,4	247	165	5,6

 65 °C-ից ոչ ցածր:

 պատրաստման պահից 2 ժամից ոչ ավել՝ մատուցման ջերմաստիճանը պահպանելու դեպքում:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Հնդկաձավար	40	40
Ջուր	30	30
Կաթ	140	140
Շաքարավազ	6	6
Աղ	0,3	0,3
Շիլայի զանգվածը.	-	200
Կարագ	10	10
Պատրաստի կերակրաբաժինը, գ		200/10



## 5. ԱՂՑԱՆՆԵՐ

Աղցանները և վինեգրետները պատրաստում են տարբեր բանջարեղենով, կանաչիներով, որոշ աղցաններին ավելացնում են մսեղեն, ձկնեղեն, եփած թռչնամիս:

Օգտագործվող ողջ մթերքի մշակումը պետք է կատարվի սահմանված սանիտարական կանոններին համապատասխան:

Կարտոֆիլը և արմատապտուղները կարելի է եփել ջրում և շոգեխաշել: Եփելիս կարտոֆիլը ընկղմում են եռացող ջրի մեջ, այդ դեպքում վիտամիններն ավելի լավ են պահպանվում: Որպեսզի կարտոֆիլը չզերիաշվի, այն եփում են թույլ կրակի վրա մինչ կիսապատրաստ լինելը, այնուհետև թափում են գրեթե ողջ ջուրը և շարունակում շոգեխաշել փակ կափարիչով մինչ պատրաստ լինելը:

Գազարը և բազուկը մաքրում են, կտրատում և շոգեխաշում քիչ քանակությամբ ջրում մինչ պատրաստ լինելը:

Հատկապես մանրակրկիտ լվանում են հում վիճակում օգտագործման ենթակա բանջարեղենը և կանաչին (բողկը, գազարը, կանաչին, հազարը):

Կերակրատեսակներում հում վիճակում օգտագործվելիք գազարը լվանում են, մաքրում կեղևը, լվանում և կտրատում: Մաքրած ու կտրտած բազուկը շոգեխաշում են՝ ավելացնելով կիտրոնաթթու գույնը պահպանելու համար: Հազարը, կանաչ սոխը, մաղաղանուրը, սամիթը և այլ թարմ բանջարեղենը տեսակավորում են, հեռացնում կողմնակի կեղտերը, քայքայված տերևները և լվանում մեծ քանակությամբ ջրում և աղային կամ կիտրոնաթթվային լուծույթում:

Որպես համեմունք օգտագործվում են բուսական յուղ կամ բուսական յուղի հիմքով համեմունք: Թթվասերի և մայրնեզի օգտագործումը չի թույլատրվում: Քացախը անհրաժեշտ է փոխարինել կիտրոնաթթվով:

Դպրոցական սննդի սառը կերակրատեսակների բաղադրության մեջ չպետք է մտնեն պղպեղը, մանանեխը, կծու սոուսները:

*Աղցաններ և վինեգրետներ պարբերաբար անհրաժեշտ է պահպանել հեղուկային կիսամաքի կանոններով:*

*- աղցանների և վինեգրետների օգտագործվող մթերքը պետք է նախապես սառեցված լինի + 8-ից + 10°C սառիձամբ:*

*- աղցանների և վինեգրետների համար եփած բանջարեղենից կապված համախառնումները կարելի է պարբերաբար նախապես (կերակրաբաժնակա մարմարեցուցիչ 1 - 2 ժամ սառազ) և պակեյ սառնարանում:*

*աղցանները և վինեգրետները համեմատելի մարմարեցուցիչ անմիջապես սառազ:*

58

# Աղյուսակ հապարով

Պատրաստման տեխնոլոգիա.

Մաքրել վարունգի կեղևը (եթե կեղևը կոշտ է), կանաչին մանրացնել: Հազարի տերևները և վարունգները կտրատել շերտերով:

Շերտերով կտրատած բանջարեղենը դնել ամանի մեջ, ավելացնել կիտրոնաթթու և բուսական յուղ, աղ և խառնել:

Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. հազարի տերևը և վարունգը կտրատած են շերտերով, մակերեսը փայլում է յուղից:


Համը. չափավոր աղի, թթվաչ:


Կազմությունը. խրթխրթան, հյութալի:

Հոտը. թարմ հազարի և վարունգի, կանաչ սոխի և բուսական յուղի:

Գույնը. կանաչ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	աղի թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
1,4	0	4,1	2,8	54	0,09	0,16	0	3,5	16,9	43,7	32,4	3,2

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատաբար վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
	Հազար (հազարի տերև)	75
Կանաչ սոխ	19	15
Թարմ վարունգ	28	20
Կանաչի (համեմ)	8	7
Աղ	0,3	0,3
Կիտրոնաթթու	0,02	0,02
Բուսական յուղ	4	4
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

# Աղյուսակ

## Պատրաստման տեխնոլոգիա.

Ոսպը եփում են առանց աղի, մինչև փափկելը:

շոգեխաշած և հովացած սոխի հետ, ավելացվում է մանր կտրատած համեմ, կիտրոնաթթու, աղ և մանրակրկիտ խառնվում է:

Սոխը կտրատում են մանր խորանարդիկներով և ավելացնելով բուսական յուղ դադում, մինչ պատրաստ լինելը: Պատրաստի, հովացած ոսպը խառնվում է

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. տեսքը պահպանված ոսպ, սոխը կտրատած է խորանարդիկով:

Համը. սոխով և համեմով եփված ոսպին բնորոշ:

Կազմությունը. փափուկ:

Հոտը. եփած ոսպի, համեմի:

Գույնը. կանաչաշագանակագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
7,7	0	9,6	11	161	0,2	0,01	0	5	60	124	41	2,3



14 °C-ից ոչ բարձր:



ոչ համեմած վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Ոսպ	37	37
Պատրաստի ոսպի զանգվածը	-	74
Կանաչի (համեմ)	9	8
Գլուխ սոխ	24	20
Բուսական յուղ	5	5
Կիտրոնաթթու	0,03	0,03
Աղ	0,8	0,8
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100



61

# Կանաչ աղցան վարունգով և լոլիկով

Պատրաստման տեխնոլոգիա.

Հազարի տերևը կտրատում են շերտերով, լոլիկը և վարունգը՝ կտորներով, ավելացնում են աղը, բուսական յուղը և մանրակրկիտ խառնում:

Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. հազարի կտրատած տերևները խառնված են լոլիկի և վարունգի հետ, մակերեսը փայլում է յուղից:


Կազմությունը. խրթխրթան, հյութալի:


Գույնը. աղցանի բաղադրության մեջ մտնող թարմ մթերքներին բնորոշ:

Համը. չափավոր աղի:

Հոտը. թարմ հազարի, վարունգի և լոլիկի:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
1	0	5,1	2,6	60	0,03	0,04	0	11,4	35,7	32,6	22,6	0,7

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատ վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը՝ 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Հազար (մատու)	41,7	30
Թարմ վարունգ	45	36
Լոլիկ	34,1	29
Բուսական յուղ	5	5
Աղ	0,2	0,2
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

# Աղցան թարմ լոբկում և վարունգում

Պատրաստման տեխնոլոգիա.

Վարունգը և լոբկը կտրատում են բարակ կտորներով: Գլուխ սոխը կտրատում են մանր խորանարդիկներով: Լոբկը և վարունգը տեղավորում են, վրան սոխ ցանում

և խառնում: Մատուցելուց առաջ աղցանի վրա լցնում են աղ և բուսական յուղ:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. լոբկը և վարունգը կտրատած են բարակ կտորներով, սոխը՝ մանր խորանարդիկներով: Բանջարեղենը դրված է բրգաձև և վրան լցրած է բուսական յուղ:

Համը. բանջարեղենին բնորոշ, համեմված սոխի և բուսական յուղի համով, չափավոր աղի:

Կազմությունը. լոբկը, վարունգը՝ առաձգական, հյութալի:

Հոտը. թարմ լոբկի, թարմ վարունգի և սոխի, բուսական յուղի համակցությամբ:

Գույնը. լոբկի՝ կարմիր: Չմաքրված վարունգի՝ սպիտակ կանաչ եզրով, մաքրածի՝ սպիտակ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
1	0	5,1	5,5	72	0,04	0,06	0	12,9	39	38	16	0,7

14 °C-ից ոչ բարձր:

ոչ համեմած վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը՝ 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար  
 համաքաշը, գ      գտաքաշը, գ

Թարմ լոբկ	57	48
Թարմ վարունգ	44	35
Գլուխ սոխ	14	12
Բուսական յուղ	5	5
Աղ	0,5	0,5
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

63

# Աղցան բարձր լոլիկով

## Պատրաստման տեխնոլոգիա.

Լոլիկը կտրատում են բարակ կտորներով, գլուխ կամ կանաչ սոխը՝ մանր շերտերով:

Կտրատած լոլիկը դնում են ըստ կերակրաբաժինների, վրան ցանում են սոխ, լցնում բուսական յուղ, աղ:

## Որակին ներկայացվող պահանջները.


Արտաքին տեսքը. լոլիկը կտրտած է կտորներով, գլուխ սոխը կիսաօղակաձև կամ օղակաձև, կանաչ սոխը՝ մանր շերտերով:


Գույնը. լոլիկի՝ կարմիր, վարդագույն, սոխի՝ կանաչ: Համը. չափավոր աղի, թթվակծու:

Կազմությունը. լոլիկինը՝ առաձգական, հյութալի:

Հոտը. թարմ լոլիկի և սոխի, բուսական յուղի համակցությամբ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
1,8	0	5,9	3,4	74	0,04	0,03	0	22,3	33,4	24,5	18,4	0,8

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատ վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը՝ 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Թարմ լոլիկ	84,7	72
Կանաչ սոխ	28,8	23
կամ գլուխ սոխ	27,4	23
Աղ	0,3	0,3
Բուսական յուղ	5	5
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

# Աղցան բանջարեղենային (վինեգրետ)

## Պատրաստման տեխնոլոգիա.

Գազարը, կարտոֆիլը, բազուկը եփում են միմյանցից առանձին՝ մինչ պատրաստ լինելը:

եռման աստիճանը, որից հետո հյութը թափում են, իսկ ոլոռը՝ հովացնում:

Եփած բանջարեղենը մաքրում են և կտրատում խորանարդիկներով: Թթու վարունգը նույնպես կտրատում են մանր խորանարդիկներով:

Պատրաստի բանջարեղենը միացնում են, մատուցելուց առաջ վրան ավելացնում են աղ և բուսական յուղ:

Գլուխ սոխը մանր կտրատում են: Պահածոյացված կանաչ ոլոռը տաքացնում են սեփական հյութում մինչ

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. կարտոֆիլը, բազուկը, գազարը, վարունգը կտրատած են մանր խորանարդիկներով, կանաչ ոլոռի տեսքը պահպանված է, գլուխ սոխը՝ մանր կտրտած:

մտնող բանջարեղենին բնորոշ:


Համը. համապատասխան բանջարեղենի, չափավոր աղի:


Կազմությունը. վարունգը, գլուխ սոխը՝ խրթխրթան, կարտոֆիլը, բազուկը, գազարը՝ փափուկ:

Հոտը. բանջարեղենի, բուսական յուղի:

Գույնը. բնական, վինեգրետի բաղադրության մեջ

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
1,4	0	8,6	7,3	112	0,04	0,03	0	9,6	48,4	41,1	21,9	0,9

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատ վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը՝ 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Կարտոֆիլ	29	21 <sup>1</sup>
Բազուկ	19	15 <sup>1</sup>
Գազար	13	10 <sup>1</sup>
Թթու վարունգ	25	20
Կանաչ ոլոռ	15	10
Գլուխ սոխ	18	15
Բուսական յուղ	8	8
Աղ	1,2	1,2
<b>Պատրաստի կերակրաբաժինը, գ</b>		<b>100</b>

<sup>1</sup> Եփած, մաքրած բանջարեղենի զանգվածը

# Աղցան սափրակ կաղամբով և խնձորով

Պատրաստման տեխնոլոգիա.

Կաղամբը, սոխը, գագարը և խնձորը կտրատում են մանր շերտերով, ավելացնում շաքարավազը, բուսական յուղը, աղը և խառնում:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. բանջարեղենը և խնձորը կտրատած են բարակ շերտերով: Աղցանի վրա լցրած է բուսական յուղ:


Կազմությունը. բանջարեղենը՝ խրթխրթան, ոչ կոշտ, հյութալի:


Գույնը. դեղնավուն՝ գագարի շնորհիվ:

Համը. հաճելի թթու, թեթևակի քաղցրահամ, չափավոր աղի, առանց դառնության:

Հոտը. թարմ սպիտակ կաղամբի՝ գագարի, խնձորի համակցությամբ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
1,3	0	5	9,2	87	0,03	0,03	0	22,4	29	26	14	1,3

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատ վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը՝ 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	
	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Թարմ սպիտակ կաղամբ	56,3	45
Գագար	18,8	15
Թարմ խնձոր	35,7	25
Գլուխ սոխ	6	5
Շաքարավազ	5	5
Բուսական յուղ	5	5
Աղ	1,2	1,2
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

66

# Աղցանի գալարում և շափարում

Պատրաստման տեխնոլոգիա.

Հում գազարը կտրատում են կամ քերում շերտերով, ավելացնում շաքարավազը, բուսական յուղով համեմում են մատուցելուց անմիջապես առաջ:

## Որակյին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. գազարը կտրատած է շերտերով:  
Աղցանը դրված է բրգաձև:

Համը. շաքարով գազարին բնորոշ:


Կազմությունը. փափուկ, հյութալի:


Հոտը. գազարի, հաճելի:

Գույնը. նարնջագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
1,3	0	5,1	11,5	97	0,06	0,07	0	3,4	26	53	37	0,7

\*Բեռտա-կարոտինի պարունակությունը 8,64 մգ

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատ վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար  
համաքաշը, գ      գտաքաշը, գ

Գազար	113	96
Շաքարավազ	5	5
Բուսական յուղ	5	5
Պատրաստի կերակրաբաժինը, գ	100	

67

# Աղցան գազարով և խնձորով

Պատրաստման տեխնոլոգիա.

Գազարն ու խնձորը կտրատում են շերտերով, միացնում միմյանց, ավելացնում շաքարավազը և մանրակրկիտ խառնում:

Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. գազարն ու խնձորը կտրատած են շերտերով: Աղցանը դրված է բրգաձև:

Համը. գազարին և խնձորին բնորոշ, քաղցրահամ:


Կազմությունը. փափուկ, հյութալի:


Հոտը. գազարի և խնձորի:

Գույնը. նարնջագույն՝ գազարի շնորհիվ:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ).	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ).	Ճարպեր (գ).	Ածխաջրեր (գ).	Էներգետիկական արժեքը (կկալ).	B1 (մգ).	B2 (մգ).	A (մկգ).	C (մգ).	Ca (մգ).	P (մգ).	Mg (մգ).	Fe (մգ).
1,1	0	0,2	8,5	40	0,05	0,08	0	4,3	24	44	30	3,3

\*Բեռտա-կարոտինի պարունակությունը 6,75 մգ

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատ վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը՝ 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

	Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար	
	համաքաշը, գ	զտաքաշը, գ
Գազար	93,8	75
Թարմ խնձոր	35,7	25
Շաքարավազ	1	1
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

68

# Աղցան գազարով և ծիրանաչիրով

Պատրաստման տեխնոլոգիա.

Մաքրած գազարը կտրատում են բարակ կտորներով և դադում քիչ քանակությամբ ջրում: Ծիրանաչիրը մանրակրկիտ լվանում են, վրան լցնում եռացող ջուր

և թողնում 10-15 րոպեով, որ ուռչեն: Պատրաստի ծիրանաչիրը կտրատում են շերտերով, այնուհետև խառնում գազարի և շաքարավազի հետ:

## Որակին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. գազարն ու ծիրանաչիրը կտրատած են կտորներով: Աղցանը դրված է բրգաձև:

Համը. գազարին և ծիրանաչրին բնորոշ:


Կազմությունը. փափուկ, հյութալի:


Հոտը. գազարի և ծիրանաչրի:

Գույնը. նարնջագույն:

1 կերակրաբաժնի քիմիական բաղադրությունը, վիտամինները և միկրոտարրերը					Վիտամիններ				Հանքային նյութեր			
Սպիտակուցներ (գ)	այդ թվում՝ կենդանաբանական ծագման սպիտակուցներ (գ)	Ճարպեր (գ)	Ածխաջրեր (գ)	Էներգետիկական արժեքը (կկալ)	B1 (մգ)	B2 (մգ)	A (մկգ)	C (մգ)	Ca (մգ)	P (մգ)	Mg (մգ)	Fe (մգ)
1,7	0	1,4	16,5	85	0,06	0,07	0	1,9	41	63	44	0,8

\*Բեռա-կարոտինի պարունակությունը 8,37 մգ

 14 °C-ից ոչ բարձր:

 ոչ համեմատաբար վիճակում պատրաստման պահից 3 ժամից ոչ ավել, պահպանման ջերմաստիճանը 6°C-ից ոչ բարձր:



## Մթերքի անվանումը

Հումքի ծախսը 1 կերակրաբաժնի համար

	համաքաշը, գ	գտաքաշը, գ
Գազար	117	93/86 <sup>1</sup>
Ծիրանաչիր	6,7	10 <sup>2</sup>
Շաքարավազ	5	5
Պատրաստի կերակրաբաժինը, գ		100

<sup>1</sup>Շոգեխաշած գազարի զանգվածը

<sup>2</sup>Ուռչած ծիրանաչրի զանգվածը

69

# Աղցան «Գարուն»

Պատրաստման տեխնոլոգիա.

Հազարի տերևը և կանաչ սոխը կտրատում են շերտերով, բողկը և վարունգը՝ բարակ կտորներով: Բոլոր բաղադրիչները խառնում են: Մատուցելուց

առաջ համեմում են բուսական յուղով, ավելացնում աղը և ձևավորում եփած ձվով:

Որակյին ներկայացվող պահանջները.

Արտաքին տեսքը. բողկը և վարունգը կտրատած են բարակ կտորներով, կանաչ հազարը՝ շերտերով, կանաչ սոխը՝ բարակ կտրատած: Բանջարեղենը պահպանում են կտրատման տեսքը, աղցանամանի մեջ դրված են բրզաձև, համեմված է բուսական յուղով, ձևավորված ձվով:


